ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 01 2024 թ.
№ ПУШП-924-52

«Երվադա» ՍՊԸ տնօրենին
ՀՀ, ք. Երևան, Արին բերդի 3-րդ նրբ. 10/3
ՀՎՀՀ 02231092
Էլ. փոստ՝ ervada-spy@mail.ru
Հեռ.՝ +37433 717 777

ՀՀ պաշտպանության նախարարության և «Երվադա» ՍՊԸ միջև 20.09.2023թ. կնքված N ՓԳՀԱՊՁԲ-23-23/3-1 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2023թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2023թ. մատակարարել մեկ անվանում ապրանք, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը՝ (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) ՀՀ պաշտպանության նախարարությունը **26.01.2024թ.-ին** միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Երվադա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***139 999 ՀՀ դրամ***՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), ***99 999 ՀՀ դրամ***՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետերի համաձայն), որը հաշվարկված է մինչև 20.12.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **2 000 000 *ՀՀ դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **3 000 000 *ՀՀ դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024թ. փետրվարի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված ***2 000 000 ՀՀ դրամ***՝ պայմանագրի կատարման ապահովման և ***3 000 000 ՀՀ դրամ***՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Երվադա» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. փետրվարի 7-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ